3059

Ռուբինյան Հ.

Ալիկ

Թ. 1909.

891.995
Р-95

003

ՈՒԼԻԿԸ

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆԻ.

ՆԿԱՐԻՑ Գ. ԽՈՒՅԵԱՆՑ

Իր ամուսին տիկին Նունէ Քալանթարի յիշատակին նուէր
ՀԱԵՐԱՍԳԻՍ ՔԱԼԱՆԹԱՐԻՑ
5354
891.99Ս
Բ-95
1002
7043

ՈՒԼԻԿԸ.

Խոր անտառում մի այծ է լինում։ Ունենում է մի գեղեցիկ ուլ։ Ուլին ամեն օր թողնում է տանը, ինքը գընում է արոտ անելու։ Արածում է ու իրիկունը կուրծը լիքը տուն է գալի։ Տուն է գալի դուռը զարկում ու մըկըկում, էսպէս կանչում.



Սնուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Մամն եմ եկել սարէ սար,
Կաթն եմ արել քեզ համար.
Դըռնակը բաց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ,
Սնուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ուլիկն իսկոյն վեր է թռչում, դուռը բաց անում։ Մայրը ծիծ է տալի նրան ու կրկին գնում արոտ։



Էս բոլորը թաքուն տեսնում է գայլը։ Մի իրիկուն այծից առաջ գալիս է, դուռը դարկում ու իր հաստ ձայնով կանչում.

Սևուկ ուլիկ
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարէ սար,
Կաթն եմ արել քեզ համար,
Դրոնակը բաց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ,

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ուլիկը լսում է լսում, ու պատասխանում։ «Էհտ ով ես դու, չեմ ճանաչում։ Իմ մայրը էտպէս չի կանչում։ Նա քաղցր ու բարակ ձայն ունի։ Քու ձայնը կոշտ է ու կոպիտ։ Դուռը բաց չեմ անի... Գնա..չեմ ուզում քեզ...»

Ու գայլը հեռանում է գնում։

Գալիս է մայրը դուռը ծեծում.
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ,
Ման եմ եկել սարէ սար,
Կաթն եմ արել քեզ համար։
Դըռնակը բա՛ց, ներս գամ ես,
Անուշ-անուշ ծիծ տամ քեզ,
Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ։

Ուլիկը դուռը բաց է անում, ծիծ է ուտում ու մօրը պատմում.

—Գիտես, մայրիկ, ինչ եղաւ։ Մի քիչ առաջ մինը եկաւ, դուռը զարկեց ու կանչում էր.

Սևուկ ուլիկ,
Սիրուն բալիկ.

ՀԱՅԿ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
7 XI 2
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ



Ասում էր՝ դուռը բաց արա։ Էնպէս հաստ ձայն ունէր։ Էնպէս վախեցայ, էնպէս վախեցայ... Դուռը բաց չարի, ասի՝ չեմ ուզում, գնա՛...

—Պա՛, պա՛, պա՛, պա՛, սևուկ ջան, ինչ լաւ է եղել, որ բաց չես արել, ասաւ վախեցած մայրը։ Էդ գայլն է եղել. եկել է, որ քեզ ուտի։ Միւս անգամ էլ որ գայ, բաց չանես. ասա՝ գնա, թէ չէ իմ մայրը կը գայ քեզ կը սպանի իր սուր պոզերով։

ՎԻՄԱԳՐԱՏՈՒՆ Գ. ԴԻՒՍՏԵՐԴԻԿԻ.

ԳԻՆՆ է 15 ԿՈՊ.

30159

0007514

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0007514

68-d
966.168